ԱՄԵՐԻԿՅԱՆ ՊՐՈՖԵՍՈՐԸ ԶՎԱՐԹՆՈՑԻ ՄԱՍԻՆ

Զվարթնոցը ճարտարապետ-գիտնական Թորոս Թորամանյանի վերակազմությամբ վերջին տասնամյակների ընթացքում հայտնի դարձավ աշխարհի շատ երկրների ճարտարապետներին և գիտնականներին: Մեր այդ հուշարձանը գրավել է նաև ԱՄՆ-ի Բլումինգտոնի համալսարանի պրոֆեսոր Յուջին Կլեյնբաուերի ուշադրությունը: Գիտնականը 1978 թ. աշնանը Երևանում տեղի ունեցած հայ արվեստին նվիրված Միջազգային երկրորդ սիմպոզիումին ներկայացրեց իր կարծիքը, նվիված Զվարթնոցին ընդհանրապես, նրա վերակազմություններին՝ մասնավորապես:[1]

Կլեյնբաուերը դեռևս 1972 թ. The Art Bulletin LIV հանդեսում (էջ 245) հրատարակել է «Զվարթնոցը և քրիստոնեական ճարտարապետության ծագումը Հայաստանում» վերտառությամբ մի հոդված:[2] Այժմ էլ, ահա, հանդես է գալիս վերակազմության առաջարկով (առանց գծագրերի), խոստումով՝ մանրամասներին անդրադառնալ հետագայում:

Զվարթնոցի կառուցման և նրա հետազոտման պատմությանը նվիրված համառոտ ակնարկից հետո, գիտնականը անդրադառնում է բուն նյութին, նշելով, որ եթե բավարար չափով որոշակի է Զվարթնոցի հատակաձևը, ապա նրա կազմությունը դրանից վերև դեռևս մնում է չճշտված:

Հետազոտողի կարծիքով հիմքեր չկան ենթադրելու, որ տաճարը եղել է եռաստիճան, որ եղել է այդքան բարձր, որ ունեցել է վերնահարկ, որ ունեցել է այդքան շատ պատուհաններ: Ահա այս և այլ խնդիրների շուրջը նրա քննարկումներում որոշակի զգացվում է հեղինակի մի շարք իրական փաստերին անտեղյակ լինելը: Ու թերևս դրանով էլ պետք է բացատրել, որ վաղուց պարզաբանված հարցերը գիտնականը սկսում է նորից վերաքննել: Այսպես օրինակ. Յուջին Կլեյնբաուերի կարծիքով Թորամանյանը

---

[1] W. Eugene Kleinbauer, Tradition and Innovation in the Design of Zvartnotz, The Second International Symposium on Armenian Art, Yerevan, 1978.

[2] W. Eugene Kleinbauer, "Zvart'nots and the Origins of Christian Architecture in Armenia," *The Art Bulletin*, Vol. 54, No. 3 (Sep., 1972), pp. 245-262.

Զվարթնոցի իր վերակազմության ճակատի գծագիրը պատրաստել է Գագկաշենի մանրակերտի [նկ. 1] Ն. Մառի պեղումներով հայտնաբերվելուց հետո, և որ այս վերջինս էլ որոշել է Գագկաշենի նախօրինակ Զվարթնոցի վերակազմության ուրվագծերը: Այս կապակցությամբ նա նաև ծանոթագրում է, որ «Насколько мне известно, тораманяновская реконструкция была впервые опубликована И. Стржиговским в его труде «Die Baukunst der Armenier und Europa», Wien, 1918»: Դեռ ավելին, համաձայն Կլեյնբաուերի «Особенно важно помнить, что верхняя часть здания никогда не была обнаружена, так что предложенная реконструкция, опубликованная под руководством Марра (и возможно даже сделанная Тораманяном), является только предположительной»:

Հաստատապես հայտնի է, որ Թորամանյանը նախքան Գագկաշենի մանրակերտի հայտնաբերումը 1906 թվականին, արդեն ուներ վերակազմած Զվարթնոցի հատակագծից բացի, նաև ճակատի և կտրվածքի գծագրերը: Նա այդպիսիք պատրաստել էր 1904 թ. (տես Խաչիկ ծ. վ. Դադյան, Զվարթնոց, «Արարատ», 1909, փետրվար, էջ 170): Դրանք մինչև օրս Թորամանյանի արխիվում պահվող և որոշ գիտական աշխատություններում հրատարակվող այն գծագրերն են, որոնց գմբեթային մասը չկա: Այդպիսիք մկրատով կտրել էր պեղումների ղեկավար Խ. Դադյանը, ասելով, թե հայկական եկեղեցիները կրկնակի գմբեթներ չեն ունենում [գծ. 1]: Մյուս գծագրերի հետ 1905 թվականին ճակատի և կտրվածքի չհրատարակվելու պատճառը եղել է նրանց անդամահատված լինելը: Գագկաշենի մանրակերտի հայտնաբերումով Դադյանի վերոհիշյալ արարքը համարվել է սխալ և նորից կազմվել ճակատի նոր գծագիր: Զվարթնոցի նոր մանրակերտի լու-սանկարը հրատարակվել է դեռևս 1911 թ. «Գեղարվեստ» ամսագրի 4-րդ հատորում (էջ 244) և ոչ 1918 թ., ինչպես գրում է Յու. Կլեյնբաուերը:

Ինչ վերաբերում է Գագկաշենի մանրակերտի հորինվածքին, ապա հայտնի է, որ այն ամբողջացրել է ոչ թե Թորոս Թորամանյանը, ինչպես ենթադրում է Կլեյնբաուերը, այլ Ն. Մառի էքսպեդիցիայի նկարիչ Ս. Ն. Պոլտորացկին: Նա ի մի է բերել պեղածո փշուրները, համաձայն ընդունված կանոնների՝ բեկորների միջև առկա պարապությունը լիցքի ձևով լրացնելով: Մանրակերտի ամբողջացման գործում Պոլտորացկու մի-

ջամտությունը լիակատար որոշակիությամբ արտահայտվում է մանրակերտի լուսանկարներում. մութ գույն ունեն հայտնաբերված մասունքները, որ տուֆակերտ են, բաց գույն՝ ալեբաստրե լիցքը բեկորների միջև:



Գծ. 1 – Թ. Թորամանյանի կազմած Զվարթնոցի կտրվածքը, որի գմբեթային հատվածը մկրատով կտրել էր վարդապետ Խ. Դաղյանը:

Ահա թե ինչ են գրում Ն. Մառն ու Հ. Օրբելին Գագկաշենի մանրակերտի վերաբերյալ. «К сожалению, - գրում է Ն. Մառը, - от модели найдены лишь части нижнего этажа. Статуя с моделью церкви в руках была отрыта в кусках: соединение отрытых кусков артистически была выполнена художником Полторацким. Он даже дал точную копию

статуи в красках с моделью церкви в руках, причем реставрировал лишь верх модели» (տես «Ани», Երևան, 1939, էջ 108):

Հ. Օրբելին նույն մանրակերտի մասին գրում է. «Модель была найдена разбитой на мелкие куски и реставрирована в музее С. Н. Полторацким. К счастью все данные были налицо, и правильность реставрации не может быть подвергнута сомнению. В сохранившейся модели имеем, к сожалению, только два нижних этажа церкви: недостает третьего и барабана с куполом» (տես “Городище Ани и его раскопки” в кн.: И. А. Орбели, «Избранные труды», Ереван, 1963, էջ 30):

Նկ. 1 *– Գագկաշենի մոդելը և Գագիկ I արքան:*

Ինչպես տեսնում ենք, Գագկաշենի մանրակերտի ամբողջացման հանգամանքների բոլոր մանրամասները այստեղ չեն բերված, ինչից հետևում է, որ այդ գործով դեռ պիտի զբաղվել: Մեր կարծիքով Ն. Մառը չպիտի թույլատրած լինի, որ իր աշխատակիցները առանց նյութական հիմքի մանրակերտի ողջ վերնամասը ամենայն մանրամասնությամբ ստեղծագործեին իրենց հայեցողությամբ, արդյունքը վերագրելով 10-րդ դարին: Բանն այն է, որ Ն. Մառը մանրակերտի վերնամասի մասին գրում է «реставрировал» չի գրում «ստեղծեց», «լրացրեց» և նման այլ բառեր, մինչ «ռեստավրացիա» անել նշանակում է վերականգնել հնարավոր չափով նախնականը և ոչ այլ կերպ:

Բացի այդ, եթե Գագկաշենի մանրակերտի վերնամասը բացարձակապես հիմքից զուրկ լիներ, Խ. Դաղյանն ու Զվարթնոցի Թորամանյանի վերակազմության մյուս վիճարկողները տեղի չէին տա, մինչ, ինչպես հաղորդում են, մանրակերտն ընդունվել է որպես անհերքելի փաստ:

Կլեյնբաուերը անհավանական համարելով Զվարթնոցի այնպիսի բարձրություն, ինչպիսին Թորամանյանի վերակազմության մեջ է, գրում է. «Реконструкция Тораманяна выглядит как трехъярусный свадебный торт, который поднимается на неправдоподобную высоту (45 м), что делает его самым высоким строением, когда либо украшавшим ландшафт средневековой Армении»:

Որպես հարսանեկան տորթ, ինչ խոսք, որ ոչ միայն 45 մետրն է շատ, այլև 45 սանտիմետրը քիչ չէ, բայց գիտնականին հայտնի՞ է, որ Թելավի շրջանում գտնվող Ալավերդի կաթողիկե տաճարի բարձրությունը անցնում է 50 մետրից:

Եթե ընդամենը 26 մետր լայնք ունեցող վերոհիշյալ երկաստիճան տաճարի բարձրությունը կարող է հասնել 53 մետրի, ապա ինչու՞ պիտի զարմանալի թվա, որ 36 մետր տրամագիծ ունեցող, այն էլ եռաստիճան ուրվագծերով Զվարթնոց տաճարի բարձրությունը հասել է 45 մետրի:

Թող նաև զարմանալի չթվա, որ լայնքի ու բարձրության հարաբերությունը գետնամած (приземистый) համարվող Հռիփսիմեում 1:1.40 է, Օձունում՝ 1:1.60, Լմբատում՝

1:1.80, Ալավերդում՝ 1:2.0, մինչ Զվարթնոցում ըստ Թորամանյանի՝ ընդամենը 1:1.26 է, իսկ ըստ Ս. Մնացականյանի՝ 1:1:

Կլեյնբաուերը ենթադրում է, որ Զվարթնոցը ոչ միայն չի եղել 45 մետր բարձրության, այն չի ունեցել նաև 35 մետր բարձրություն: Նրա կարծիքով տաճարի առաջին աստիճանի բարձրությունը չի հասել 11.6 մետրի: Եվ քանի որ տաճարը ենթադրում է երկաստիճան, հետևաբար այն պիտի ունենար ընդամենը 15-18 մ բարձրություն և ոչ ավելի:

Ինչպես հասկացվում է, ըստ Կլեյնբաուերի վերոհիշյալ՝ լայնության և բարձրության հարաբերակցությունը Զվարթնոցում պիտի կազմեր 1:0.5: Այս կլիներ մի աննախադեպ երևույթ հայ ճարտարապետության ողջ պատմության ընթացքում:

Եվ վերջապես, որքանով է տրամաբանական Զվարթնոցի տվյալ բարձրությունը հավատալու համար նույն բարձրության մի այլ շենքի գոյության անհրաժեշտություն, այն էլ նույն ժամանակներին պատկանող: Կյանքում նման երևույթներ չեն հանդիպում:

Կլեյնբաուերը չի ընդունում Զվարթնոցի եռաստիճան լինելը, համոզված լինելով, որ այն եղել է երկաստիճան, գրում է. «Нет ни одного примера трехэтажного наружного обьема. Насколько мне известно этот важный факт остался незамеченным или игнорировался всеми специалистами, имевшими дело со Звартноцем, и все они позволили загипнотизировать себя Тороманяновской реконструкцией, опубликованной в начале века. Ни одно здание раннесредневекового периода в любой части христианского мира не напоминает реконструкции Звартноца»:

Հայ հին ճարտարապետության հուշարձանների ուսումնասիրությամբ զբաղվողներին հայտնի է, որ 624-631 թթ. կառուցված Բագարան տաճարը իր արտաքին ծավալատարածական հորինվածքով եռաստիճան է և, անկասկած, իր այդ կողմով Զվարթնոցի համար եղել է նախօրինակ:

Մեզ քաջ հայտնի է, որ Յուջին Կլեյնբաուերը տեղյակ է այնպիսի տաճարի գոյության, ինչպիսին Բանակ տաճարն է Խորազույն Հայքում, նա ծանոթ է «Տայքի ճարտարապետական հուշարձանները» աշխատության (1972 թ.) էջերում բերված

փաստերին, որ այն կառուցվել է 7-րդ դարում և միայն վերակառուցվել 9-10-րդ դդ. սահմանագծում: Այդ տաճարի ավերակի լուսանկարներով հայտնի է, որ այն եղել է եռաստիճան զվարթնոցանման շինություն: Այս ամենից հետո հետազոտողն ինչպե՞ս է հնարավոր համարում գրել, որ իբր եռաստիճան արտաքին հորինվածով շենքեր չեն եղել ողջ քրիստոնեական աշխարհում: Սա չի՞ նշանակում նույնպիսի հիպնոսացում, սակայն սեփական դատողություններից, որը, թերևս, ավելի լավ տեսակի չէ:

Հիշատակելի է, որ Թորամանյանի վերակազմության նույն դիրքերից վիճարկողների կարծիքները երբեմն խաչաձևում, հակադրվում են միմյանց: Ոմանք պնդում են, որ Զվարթնոցի կոմպոզիցիայով շինություններն ու մանրանկարները միջնադարում սովորական երևույթ են, մինչ Կլեյնբաուերի պնդմամբ այդ վերակազմության կոմպոզիցիան հիշեցնող մի այլ օրինակ գոյություն չունի:

Կլեյնբաուերը (նաև Ս. Մնացականյանը) այն համոզման է, որ եթե փորձելու լինենք վերակազմել Զվարթնոցի արտաքին տեսքը, անհրաժեշտաբար պետք է դիտարկենք Հայաստանում և նրանից դուրս գտնվող իր ժամանակի քառախորան տաճարները. «Даже беглое рассмотрение армянских церквей того времени, - գրում է նա, - чей внешний вид известен с достаточной точностью, а именно таких как Талин, Мастара, Рипсиме, Гаяне и Сисиан, показывает, что хотя они и очень различны по своим планам, но все они разделяют одну и ту же заметную особенность: их обьемы всегда двухэтажны ...»:

Հուշարձանի կազմության, նրա հարկայնության որոշման հարցով զբաղվողը, որքան մենք հասկանում ենք, պետք է նախ և առաջ լավ ըմբռնի հատակագծի կազմության էությունը, իր համար մինչև վերջ պարզի նրանում առկա ամեն մի տարրի դերն ու նշանակությունը երբեմնի կանգուն շինության օրգանիզմում, նրա կայունության, հորինվածքային կազմության, ներքին ու արտաքին ճարտարապետական հարդարման գործում:

Հնարավոր չէ պատկերացնել, որ Զվարթնոցի նման յուրօրինակ հատակագծա-պատկերը չհուշի այն ծավալատարածական հորինվածքի ընդհանուր բնույթն ու կարևոր մասերի ուրվագծերը, որ երբեմն բարձրացել են այդ հիմքի վրա:

Ստացվում է այնպես, որ ռեալ փաստերը թողած, ավելի ճիշտ՝ անուշադրության մատնած (միևնույն է՝ կանխակալ, թե ոչ կանխակալ նպատակով), հարցի պատասխանը որոնում է հեռավոր, բնույթով, կազմությամբ, ոճով, նշանակությամբ տարբեր շինություններում, նրանց հետ համեմատելով փորձեր են արվում կոնկրետ հուշարձանի այս կամ այն կողմը բնութագրել, կամ պատկերել: Այսպես օրինակ, Կլեյնբաուերը գրում է. «Ближайшую аналогию, быть может представляет хорошо сохранившаяся церковь VI в. Сан Витале в Равенне, в Италии, но даже это строение характеризуется двухэтажным наружным обьемом, несмотря на присутсвие галереи»:

Այս մեջբերումից աներկբա հասկացվում է, որ գիտնականի համար մինչև վերջ պարզված չէ Սան Վիտալեի և Զվարթնոցի հատակագծերի միջև եղած սկզբունքային տարբերությունը: Այդտեղ ամբողջությամբ անտեսված է արծվախոյակ սյուների նշանակությունը Զվարթնոցում, այն սյուների, որոնք չկան Սան Վիտալեում և կան Զվարթնոցում, որ հենց այդ սյուների առկայությամբ է պայմանավորված Զվարթնոցի բոլորակ հիմքով եռաստիճան կազմությունը:

Իհարկե, հնարավոր է ասել, որ այդ սյուները դրված են շրջանց սրահի հարկաբաժնի ծածկի ներքին հենարան հանդիսացող մեծաթռիչք կամարաթաղերի հենման համար: Այդ դեպքում պետք է պարզել, թե միայն ու միայն շրջանց սրահի ծածկը հենելու համար միջնադարի մեծատաղանդ հմուտ կառուցող ճարտարապետը կդիմե՞ր այնպիսի ծավալուն, արտակարգ չափերի, բարդ ու անսովոր ձև ունեցող կառուցվածքի իրականացմանը, ինչպիսին է ութ մեծաթռիչք կամարաթաղերով ստեղծված քարակրաբետոնակուռ օղակաձև զանգվածը: Այսպիսի մեծ ձեռնարկը կարող էր արդարացվել միայն ու միայն մեծ ու կարևոր նպատակի իրականացմամբ: Այդ նպատակը եղել է տաճարն օժտել թմբկաձև երկրորդ աստիճանով, որից վերև պիտի լիներ տաճա-

րի երրորդ աստիճանը՝ գմբեթաթմբուկը ներքին կիսագնդաձև ծածկով ու արտաքին կոնաձև վեղարով:

Յուջին Կլեյնբաուերը չընդունելով Զվարթնոցի հորինվածքի եռաստիճան կազմությունը, անհամաձայն լինելով նրա զգալի բարձրությանը, չի ընդունում նաև վերնահարկի գոյությունը տաճարի առաջին աստիճանի սահմաններում, քանի որ նրա գոյությամբ է տաճարը այդ բարձրության հասնում: Եվ որպեսզի վերնահարկը անիրական համարվի, անիրական է համարում նաև այն լուսավորող բոլորակ պատուհանների գոյությունը վերնահարկի բարձրության վրա՝ առաջին աստիճանի սահմաններում: Բայց քանի որ բոլորակ պատուհանների տվյալ տեղադրումը հավաստվում է Զվարթնոցի կրկնօրինակ Գագկաշենի մանրակերտով, նա փորձում է վիճարկել նաև մանրակերտի այդ դրվագի ճշգրիտ լինելը, գիտենալով, որ վերջինս ամբողջացվել է որոշակի ռեստավրացիայով: Այս հարցի կապակցությամբ Կլեյնբաուերը գրում է. «Исходя из этих наблюдений, мы можем задать вопрос, действительно ли кольцо круглых окон увенчивало Звартноц. Возможно, эти имелись в другой части строения, а именно на втором этаже памятника, и были численно намного меньше, чем Тораманян и другие исследователи хотели заставить нас предположить»:

Ինչպես տեսնում ենք, գիտնականը փորձում է չնկատել, որ բոլորակ պատուհանները գտնվում են Գագկաշենի մանրակերտի հենց այն մասում, որը երջանիկ պատահականությամբ պահպանվել է իր տեղում՝ առաջին աստիճանի վերևում՝ ճշտորեն վերնահարկի բարձրության վրա:

Այստեղից հետևում է, որ Կլեյնբաուերը իզուր է փորձում Գագկաշենի մանրակերտի վերնամասի ռեստավրացիայի փաստով անհավանական համարել բոլորակ պատուհանների թորամանյանական տեղադրումը Զվարթնոցի վերակազմության ճակատի գծագրում՝ առաջին աստիճանի քանդակազոտու վերևում, այնտեղ, որտեղ վերնահարկն է նաև Թորամանյանի հիշյալ վերակազմությամբ:

Որոշ աշխատություններում զգալի մանրամասնությամբ շարադրված և իրեղեն փաստերով հիմնավորված է վերնահարկի երբեմնի գոյությունը Զվարթնոցում, անկախ

նրանից, որ Ս. Մնացականյանը և նրա հետևությամբ նաև ուրիշները, այդ թվում և Կլեյնբաուերը, ժխտում են որևէ վերնահարկի գոյություն հայկական եկեղեցիներում Զվարթնոցից առաջ և հետո: Եվ վերջապես ինչ պարտադիր է վերնահարկի միանմանությունը ամենուրեք: Օրինակ Բանակ տաճարում բացի բոլորակ (չորս քառորդում) և գմբեթի բարձրության վրա շրջանց սրահներից, չորս աշտարականման ծավալներում առկա են միմյանցից տարբեր ձևերի եռահարկ օթյակ-վերնահարկեր: Նորից հիշենք, որ Բանակ տաճարի 7-րդ դարում կառուցված լինելը, փաստորեն անվիճարկելի է: Վերնահարկ կա նաև Ծիծեռնավանքում, որի դիտարկումը նաև այսօր մատչելի է բոլորի համար: Թ. Թորամանյանը խոսելով Անիի Մայր տաճարի ավագ սեղանի երկու կողմերի պատի ներսում առկա սանդուղքների մասին, նրանց անվանում է «վերնահարկ տանող սանդուղքներ» և այլն: Հայտնի է, որ դեռևս հինգերորդ դարում Գյուտ կաթողիկոսի կարգադրությամբ կառուցվել է եկեղեցի, որ ունեցել է սյունազարդ վերնահարկ:

Կլեյնբաուերը համաձայն չէ, որ Զվարթնոցում՝ նրա բոլոր 32 նիստերի վրա պատուհաններ տեղադրվեն: Դեմ լինելով նրանց մեծաքանակ լինելուն, առաջարկում է այնպիսի տարբերակ, որի դեպքում Զվարթնոցն ու Հռիփսիմեն ներքուստ միմյանց նմանվեն. «В этом случае интерьер Звартноца напоминал бы интерьер Св. Рипсиме», այդ դեպքում պատուհանները քիչ կլինեին, պատերը՝ շատ. «Как правило, - գրում է նա, - стены армянских церквей VI и VII вв. массивны, похожи на крепостные и имеют очень небольшую площадь оконных проемов...»: Նա առաջարկում է պատուհանների քանակը փոքրացնել և խմբավորել հինգ շքամուտքերի շուրջը, ինչպես Բոսրայում է: Ճարտարապետի համար այդ առումով նույնը չի կարող լինել շինության ճակատում պատուհանների խմբավորումը մի դեպքում, երբ այն ուղղանկյունի է (Բոսրա), և մյուս դեպքում, երբ այն բոլորակ է (Զվարթնոց):

Հայտնի է, որ Գագկաշենի մանրակերտի անվնաս մնացած ներքնամասում պատուհաններ են ցույց տրված բոլոր նիստերի վրա: Ճշտորեն այդպես է նաև զվարթնոցա-

տիպ Բանակ տաճարում: Ճարտարապետորեն ճիշտը սա է: Այս օրինակները կովան են Զվարթնոցը նույն սկզբունքով պատկերելու համար:

Որ պատուհանները Զվարթնոցում խմբավորված չեն եղել միայն մուտքերի շուրջը, եզրակացվում է հուշարձանի հարավ-արևելյան պատուհանների եզրեր պարունակող փոքր զանգվածի ուշադիր զննումով: Այդ զանգվածը ընկած է մոտակա՝ հարավային մուտքից դեպի արևելք 3-4 մետր հեռավորության վրա, հետևաբար այն հիշյալ մուտքը շրջապատող պատուհաններից չէ: Զույգ սյուներով այդ պատահատվածի երկու հարևան նիստերի վրա էլ պահպանվում են պատուհանաեզրեր: Այս նշանակում է մուտքից հեռու պատուհաններ են եղել հարևան նիստերի վրա: Զվարթնոցում մուտքերի միջև առկա են ընդամենը երեքական նիստեր. մուտքերի շուրջը պատուհանների խմբավորման դեպքում, պատուհաններ են ստանում գրեթե բոլոր նիստերը: Զվարրթնոցի հինգ շքամուտքերը գտնվում են տաճարի արևմտյան կեսի սահմաններում, եթե պատուհանները խմբավորվեին մուտքերի շուրջը, ապա տաճարի արևելյան կեսը պատուհաններ չունենալով, կմնար լիակատար խավարում:

Այս ամենով եզրակացվում է, որ Զվարթնոցի թորամանյանական և մյուս վերակազմություններում թմբկապատերի բոլոր նիստերի վրա պատուհաններ ցույց տալը հիմնավորվում է ավերակի տվյալներով, հանգամանք, որը մեր կարծիքով այլևս առարկություն չի ընդունի:

Գիտական ամեն մի աշխատության մեջ արվող եզրակացությունները անհրաժեշտաբար պետք է լինեն որոշակի, կոնկրետ և որ գլխավորն է՝ ճշգրիտ: Եվ ապա, եզրակացությունը պետք է համապատասխանի այն փաստերի տվյալներին, որոնց հիմքի վրա բանաձևվել է այն:

Յուջին Կլեյնբաուերի սիմպոզիումում կարդացած աշխատության վերջաբանը սկսվում է կարևոր, բայց և նուրբ հարցով. «... надо ли оценивать Звартноц как производный памятник, или как продукт специфически армянского творческого усилия»: Իր հարցին ինքը պատասխանելով, գրում է. «... истина в этом вопросе лежит посередине между двумя крайними точками зрения»: Ավելի կոնկրետանալով գրում է. «С другой

стороны, некототрые ососбенности церкви обнаруживают ее производный характер. План Звартноца заимствован из области, лежащей к юго-западу от Армении»: Ինչպես տեսնում ենք, եզրակացությունը միանգամայն որոշակի է՝ Զվարթնոց եկեղեցին ունի ածանցյալ բնույթ, նրա հատակագիծը փոխառություն է: Արդ տեսնենք, թե այս եզրակացության հիմքում ինչ փաստեր են դրված. կարդում ենք. «Использование в нем колонн, столь необычное в раннесредневековой армянской церковной архитектуре подтверждает это заимствование»: Սրա հետ մեր անհամաձայնությունը երկու կողմ ունի: Առաջինն այն է, որ այսպիսի մի բազմատարր յուրօրինակ հյուսվածք նրանում գործադրված միմիայն մեկ տարրով բնորոշել չի կարելի: Սյունը դեռ հատակագիծ չէ: Երկրորդ անհամաձայնությունն այն է, որ մինչև Զվարթնոցը, Հայաստանում առանձին կանգնած սյունը ունեցել է ոչ քիչ գործադրություն: Եթե, նույնիսկ մասսայաբար գործադրվող քարե խարիսխներով փայտե սյուները նկատի չառնենք ու Գառնիի մասին չխոսենք, ապա քարակերտ սյուների գործադրությունն են հաստատում Երերուքի ավերակում առկա քարե սյուների խոյակները, Դվինում առկա ինչպես սովորական, այնպես էլ մեծ չափերի խոյակները, նաև քառակուսի ու խաչաձև հիմքով գմբեթակիր սյուները Էջմիածնում, Բագարանում, Գայանեում և այլուր:

Այսպիսով պարզվում է, որ Կլեյնբաուերը տեղյակ չէ Հայաստանում առանձին կանգնած սյուների գործածության փաստին: Եվ վերջապես Կլեյնբաուերի կողմից հիշեցվող լոկ առանձին սյուների գործադրության փաստը, որպես հիմք, միանգամայն անբավարար է այնպիսի համապարփակ եզրակացություն բանաձևելու համար, ինպիսին անում է հետազոտողը գրելով, թե «Զվարթնոցի հատակագիծը փոխառյալ է»:

Թվում է, թե գիտնականը «փոխառյալ» պետք է համարի ոչ թե Զվարթնոցի հատակագիծն ամբողջությամբ, այդ ակներև սխալ է, այլ նրանում սյուների գործադրության կերպը խորաններում: Ըստ որում, այստեղ կարևորը առանձին սյունը չէ, այլ այն մոտիվը, որը ստեղծվում է նաև սյան գործադրությամբ:

Կլեյնբաուերը շարունակում է. «Карзинообразные капители более всего схожие с имеющимися примерами в северной Месопотамии (например Дара, Нисибин и церковь

Богородицы в Майафаркине), а капители с высеченными на них орлами напоминают большую группу византийских капителей V и VI вв.»:

Յուջին Կլեյնբաուերի այս արտահայտությունները մեզ անմիջականորեն հիշեցնում են Ա. Լ. Յակոբսոնի նույնպիսի արտահայտություններին, բերված նրա «Очерки истории зодчества Армении V-XVII вв.» (1950 թ.) աշխատության էջերում: Այստեղ զամբյուղահյուս խոյակների մասին կարդում ենք. «հնարավոր է, որ այդ խոյակների պատրաստմանը մասնակցած լինեն հունական (սիրիական) վարպետներ»: Արծվաքանդակ խոյակների մասին նույն տեղում կարդում ենք. «ավանդված է դեռևս անտիկ արվեստից, որը հելլենական արևելքում եղել է այնքան տարածված»:

Ինչպես հայտնի է Զվարթնոցի կողովահյուս և արծվապատկեր խոյակների հավաստի նախօրինակներ և ճշգրիտ կրկնօրինակներ աշխարհում չկան (բացառությամբ ավելի վաղ 5-րդ դարում մեր Երերուք բազիլիկ տաճարի կողովահյուս խոյակի):

Կան, իհարկե, խոյակներ, որ ստեղծված են կենդանիների գլուխների և այլ պատկերներով, կան նաև արծվապատկեր մոտիվներ, սակայն դրանք լոկ մոտիվներ են ու թեմաներ, որ շատ հնուց են գալիս, բայց այդպիսիք կոնկրետ այնպիսի մարմնավորում չեն ստացել, ինչպիսին տեսնում ենք Զվարթնոցում:

Միանգամայն մարդկային է մի բան տեսնել, մի ուրիշ բան հիշել, սակայն մասնագետը լոկ հիշեցնող մոտիվների ու թեմաների առկայությամբ չպիտի հնարավոր համարեր մտահանգելու, առավել ևս գրելու, թե Զվարթնոցը փոխառյալ է, և որ այն դուրս է ընկնում հայ ճարտարապետության զարգացման գլխավոր գծից, որ այն արդյունք չէ տիպիկ հայ ստեղծագործական ջանքի: «Поскольку в те времена его план был в Армении исключением, он в действительности находится вне основного движения оригинальной армянской церковной архитектуры, представленной церквами Св. Рипсиме и Св. Гаяне», - գրում է Կլեյնբաուերը:

Մեր ընկալումով կասկածի կամ վիճարկման ենթակա չէ, որ հայ ճարտարապետության զարգացման գլխավոր գիծը 7-րդ դարի կեսերին անցել է Զվարթնոցով: Զվարթնոցը հանդիսացել է իրեն նախորդած ողջ ժամանակաշրջանի զարգացման

տրամաբանական շարունակությունը, նրա պսակը: Այն, որ Զվարթնոցից հետո նրա նմանողությամբ, նրա որոշ կողմերի կրկնությամբ ստեղծվեցին նոր որակ նշանավորող մեծաթիվ հուշարձաններ, այդ նշանակում է, որ իրոք, հայ ճարտարապետության զարգացման գլխավոր գիծը բնորոշվում է ոչ միայն Հռիփսիմեով և Գայանեով, այլև Զվարթնոցով ու նրան հաջորդող հուշարձաններով: Այդ նշանակում է, որ այդ գլխավոր գիծը նախորդներով չի ընդհատվում և, ապա հետագան լոկ Զվարթնոցով չի սկսվում: Զարգացման այդ գիծը իր որոնումներով, թռիչքներով ու զիգզագներով միասնական է և օրգանական: Եթե իրողությունը այդպես չլիներ, եթե տվյալ հորինվածքի ստեղծման բուն նախադրյալները տեղական չլինեին, ապա Զվարթնոցը հատկապես Հայաստանում չէր ստեղծվի:

Եթե թվարկելու լինենք Զվարթնոցի ու հայկական տետրակոնխերի և Կլեյնբաուերի հիշատակած ու ակնարկած հյուսիսային Միջագետքի, Սիրիայի կամ Բյուզանդիայի տվյալ թեմային հարող հուշարձանների միջև առկա ընդհանրությունները մի կողմից, տարբերությունները՝ մյուս, պարզ կլիներ, թե որքան անհիմն է Զվարթնոցի հատակագիծը մեր իրականության մեջ բացառություն համարելը:

Նախքան Զվարթնոցը, քառակոնխի թեման շուրջ երկու հարյուր տարի մշակվում էր հայ ճարտարապետության շրջանակներում և այն հորինվածքային այնպիսի բազմազանություններով պսակվեց, որի հետ ի վիճակի չեն համեմատվել ճարտարապետության այլ շրջանակներ:

Հարցի լուծմանը պատմականորեն նայելով, տեսնում ենք, թե ինչպես ըմբռնելի են դառնում ճարտարապետական ձևերի և բովանդակության զարգացման օրինաչափությունները, թե որքան հասունացած էին այդ ժամանակ Զվարթնոցը երկնող նախադրյալները: Իսկ նախադրյալների ոլորտում ուրույն տեղ ունի բնական, անխուսափելիորեն անհրաժեշտ փոխազդեցությունների հանգամանքը, որպես դրական, նաև առաջմղիչ երևույթ: Ըստ որում, այդ պրոցեսը կայուն և ավանդույթներով հարուստ միջավայրում այնպիսի վերափոխություններ է կրում ու մի նոր որակ բնորոշում, որ գրեթե ոչինչ չի մնում ազդակ հանդիսացող նախօրինակից: Այս պրոցեսին մի այլ անուն

տալը, «ածանցյալ», «փոխառյալ» անվանակոչելը, ինչպես համոզվում ենք, տեսականորեն սխալ է:

Յուջին Կլեյնբաուերը Զվարթնոցը որպես արվեստի ստեղծագործություն դնելով «հայկական եկեղեցական յուրօրինակ ճարտարապետության զարգացման հիմնական շարժումից դուրս», այն հանձնելով հյուսիսային Միջագետքին, Սիրիային, Բյուզանդիային, չզլանալով մեծահոգաբար հայ ճարտարապետությանը բաժին է թողնում հուշարձանի հաջող տեղադրումը համաձայն ավանդույթի, շինանյութի ընտրությունը տեղական հանքերից, հմուտ կառուցող-իրականացնողի պատիվը, ապա և նախօրինակի փայտածածկերի քարով փոխարինելու պարտականությունը, ահավասիկ. «В то время как прототип церкви мог быть построен из камня и дерева, Звартноц построен целиком из камня; деревянные потолки и деревянный купол, или центральная башня, в модели целиком заменены коробовым сводом и центральным куполом, сделанным из камня»:

Անկախ նրանից, որ շատ հասարակ ձևով է ասվում ծածկի շինանյութի փոփոխման մասին, սակայն իր ժամանակին ծածկի հարցը շինարարության լուրջ պրոբլեմներից է եղել: Համեմատաբար մեծ թռիչքով սրահների և գմբեթների փայտակերտ ծածկերը քարով փոխարինելը սովորական-տեխնիկական բնույթ չի ունեցել, այն նշանավորել է մի նոր թռիչք, իր հետ բերելով միջոցառումներ, որոնք թելադրել են ինչպես հատակագծերի, այնպես և ծավալատարածական հորինվածքների նոր լուծումներ, ճարտարապետական ձևերի օգտագործում շինության նաև ներքին ու արտաքին հարդարման գործում:

Քառաթև էքսեդրները մի շրջագծի բերելու և շրջանց սրահը քարով ծածկելու համար Զվարթնոցում արծվախոյակ սյան տվյալ ձևով տեղակայումը և, ապա, մեծաչափ կլոր եզրաղեղով կամարաթաղերի ստեղծումը ինքնին ճարտարապետական-ստեղծագործական մտքի մի թռիչք էր, որի նշանակությունը իր ստվերում է թողնում Կլեյնբաուերի հիմնական կռվանը՝ սյուների օգտագործման փաստը Զվարթնոցում:

Զարմանալի տրամաբանությամբ են առաջնորդվում Զվարթնոցի առաջին վերակազմության վիճարկողները: Թորոս Թորամանյանի պես գիտնականի և արվեստագետի խորապես մտածված դրույթները ժխտելու համար վկայակոչում են հետազոտողների և նույնիսկ ոչ մասնագետների, որոնք նյութը դեռ լրիվ չուսումնասիրած, և երբեմն այդ վերակազմության ամբողջությունն ու մանրամասները չհասկացած, լոկ ենթադրություններ են արտահայտել, կարծիքներ հայտնել, որպիսիք սակայն մինչև օրս ոչ ոքի կողմից հավանության չեն արժանացել, գիտականորեն չեն հիմնավորվել, ըստ էության չեն արժեքավորվել ու չեն ճանաչվել:

Օրինակ Ս. Մնացականյանի վկայակոչած բոլոր անձնավորությունները անխտիր Զվարթնոցը այնպես լավ չեն հասկացել, ինչպես Թորամանյանը: Դեռ ավելին, հետազոտողը երբեմն այդ կարծիք հայտնողներին ավելի է վերագրում, քան նրանք իրոք ասել են, երբեմն լիովին գիտակցում է նրանց որոշ կարծիքների ակներև սխալ լինելը, սակայն նրանց անունները անպայման բերում է որոշակի «տպավորություն» ստեղծելու ակնկալությամբ:

Այժմ էլ ահա Յուջին Կլեյնբաուերը Զվարթնոցի վերնահարկը ժխտելու համար վկայակոչում է Ս. Մնացականյանին գրելով, թե «... Как доказал С. Мнацаканян, галереи маловероятны по конструктивным причинам ...»:

Մեր գնահատմամբ Ս. Մնացականյանի անհաջողությունների մի մասը արդյունք է Զվարթնոցի կոնստրուկցիաներից «գլուխ չհանելուն»: Նա մի քանի ցուցումներից հետո ձևականորեն ընդունում է Զվարթնոցի կմախքի տարածական աշխատանքի բնույթը, հաջորդ էջերում շարունակում է շարադրել իր հին ըմբռնումները՝ վերևի խորշերի միջոցով արծվախոյակ սյուների բեռնավորվածության թեթևացման վերաբերյալ և այլն:

Կլեյնբաուերը Զվարթնոցի կոնստրուկցիաների աշխատանքին անդրադառնալիս օգուտ կստանար դիմելով կոնստրուկտոր ինժեներ Հարություն Ղազանչյանի հաշվարկումներին, գրված իտալերեն, որ լույս է տեսել առանձին գրքով 1977 թ. Միլանում (Իտալիա):

Յուջին Կլեյնբաուերը Զվարթնոցի արտաքին ճարտարապետությանն անդրադառնալով, գրում է. «Если мы, следовательно продолжим попытки реконструировать внешний вид Звартноца, необходимо будет привлечь к рассмотрению современные ему тетраконховые строения Армении и связанные с ними тетраконховые здания в других странах»: Նույն ձևով ներքին ճարտարապետությանն անդրադառնալով, գրում է. «В этом случае интерьер Звартноца напоминал бы интерьер Св. Рипсиме с ребристым полуциркульным куполом, разделенным на секторы, и карнизом, опирающимся на четыре арки и на четыре тромпа, в большой степени, чем на парусе»: Ահա այսպիսին է պատկերացնում Կլեյնբաուերը երբեմնի կանգուն Զվարթնոցը:

Մյուս կողմից ինքն իրեն հակասելով գրում է տրամագծորեն հակառակը. «Поскольку в те времена его план был в Армении исключением, он в действительности находится вне основного движения оригинальной Армянской церковной архитектуры, представленной, например, церквами Св. Рипсиме и Св. Гаяне»:

Միթե՞ հնարավոր է օտարամուծ հատակագծի վրա հարազատ ձևերի գործադրմամբ ստանալ բարձր կարգի դասական արվեստի գործ, որպիսին Զվարթնոցն է:

Արդ, եթե իրոք Զվարթնոցը գտնվում է հայ ճարտարապետության զարգացման գլխավոր գծից մի կողմ, ապա ի՞նչ հիմքով նրա ձևերը պետք է որոնել մեր մյուս հուշարձաններում, կամ ինչու՞ պիտի ունենա նրանց հարկայնությունը, բարձրությունը, խուլ պատերի մեծ հարթությունները և այլ նույնական յուրահատկություններ:

Ողջ վերոհիշյալի հիման վրա արդ հնարավոր է դառնում եզրակացնել, որ Յուջին Կլեյնբաուերին չի հաջողվել զվարթնոցագիտությանը բերել դրականորեն արժեքավորվող որևէ հավելում: Աշխատության անհաջողության հիմքում պետք է նկատել գիտնականի՝ բուն ավերակում տևական հետազոտությամբ զբաղվելու հնարավորության պակասը, ինչպես և Զվարթնոցին նվիրված մյուս աշխատությունների ոչ լիակատար ծանոթությունը, թերևս վերջիններիս միայն հայերեն հրատարակված լինելու պատճառով: